Հավելված N 7
2026 թվականի հունվարի 26-ին կնքված
N «ԴՏՊ-1160-11012/ԱՀԵԾ-7/26» պայմանագրի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

**Միջոցառման անվանումը՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում»**

**Համառոտ բովանդակությունը՝** Խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում Վարդենիսի տարածաշրջանում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնում

**Հաշվետու ժամանակաշրջան՝** *2026թ երկրորդ եռամսյակ*

| | Իրականացված գործողություններ | Ակնկալվող արդյունքները | Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր | Փաստացի մատուցած ծառայություններ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| | Ծրագրային գործողություններն ընթացել են բնականոն հունով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի և շահառուների կարիքների գնահատման արդյունքների: Մասնագետներն ու խմբակավարները կանոնավոր կերպով փաստաթղթավորել են իրականացված աշխատանքներն ու արձանագրված առաջընթացը, որոնք ամրագրվել են իրենց հաշվետվությունների մեջ: Ելնելով ընթացիկ կարիքներից՝ անհատական և խմբակային պարապմունքների բովանդակության մեջ կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ: Իրականացվել է միջոցառում՝ նվիրված «Համբարձման» տոնին: Տիկնիկային ներկայացման միջոցով ներկայացվել է «Աշխարի արարումը»: Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցու քահանա՝ Տեր Հարությունը անընդհատ | Շահառուների մեծամասնության մոտ նկատվում է ակնհայտ դրական արդյունք. բարելավվել են նրանց մտավոր ունակություններն ու մասնագիտական հմտությունները: | Բազմամասնագիտական թիմի բոլոր անդամներն իրենց պլանավորած աշխատանքները կատարել են ժամանակին և գրանցել օրագրերում, ստացված արդյունքների հաշվետվությունը ներկայացվել է ծրագրի համակարգողին: Անընդհատ կատարվել են համեմատություններ շահառուների սկզբնական | Տրամադրվել են մասնագիտական թիմի կողմից բոլոր պլանավորված ծառայությունները: Ծառայությունները տրաադրվել են անհատական և խմբային ձևաչափով՝ նոր մոտեցումներով: Տրամադրվել են համակցված ծառայություններ բազմամասնագիտական թիմի կողմից: Շահառուները մեծ հաճույքով մասնակցել են տարբեր խմբակների և ունեն | Դրական փոփոխություններ են արձանագրվել շահառուների առօրյա կյանքում: Ընտանիքների հավաստմամբ և մեր դիտարկումներով նրանք անկաշկանդ շփվում են շրջապատի մարդկանց հետ, կարողանում են ինքնուրույն զբաղվել ինքնախնամքով, օգնում են տնտեսական գործերում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աստվածահաճո զրույցներ է ունեցել շահառուների հետ փոխանցելով նրանց հոգևոր արժեքներ: Կազմակերպվեց տեղեկատվական միջոցառում որում շահառուները տեղեկացան ընտրությունների ընթաղքում իրենց պարտականությունների և գործողությունների մասին, ինչպես նաև սովորեցին թե ինչպես համացանցում տեղակայված կեղծ տեղեկությունը տարբերեն իրականից: Տարբեր իրավիճակներ ներկայացնող դերային խաղերի միջոցով շահառուները հմտացել են իրենց պահվածքի դրսևորման մեջ: Կատարվել են բացօդյա վարժանքներ և մրցույթներ, շահառուների անվտանգությունն ու ինքնազգացողությունը հսկվել է բոլոր աշխատակիցների կողմից: | | կարիքների և առկա հմտությունների միջև: | իրենց անհատական աշխատանքները: Շահառուների մոտ ամրապնդվել են ինքնախնամքի, ինքնասպասարկման, շրջապատի մաքրության, հիգիենայի, առողջ սննդի և ապրելակերպի հմտությունները: | |
| Ընդամենը շահառուներ՝ 23 | | | | | |
| | | | | | |

Ազդեցությունը՝ . Ծրագրի իրականացման արդյունքում թիրախային խմբի շրջանում արձանագրվել են հետևյալ որոշակի դրական փոփոխությունները: Մասնավորապես՝ շահառուների միջավայրի ընդլայնման շնորհիվ զգալիորեն զարգացել են նրանց միջանձնային հաղորդակցման հմտությունները, իսկ հանրային վայրերում դրսևորվող կաշկանդվածությունը հաջողությամբ փոխարինվել է ավելի անկաշկանդ վարքագծով: Միաժամանակ, մասնագիտացված խմբակների (կարպետագործություն, փայտամշակում, կար ու ձև և համակարգչային հմտություններ) կանոնավոր պարապմունքների արդյունքում շահառուները ձեռք են բերել կոնկրետ գործնական ու աշխատանքային ունակություններ, որոնք զարգացրել են նրանց հմտությունները; Բացի այդ, շահառուների կանոնավոր մասնակցությունը կենտրոնի թեմատիկ և համայնքային հանրային միջոցառումներին ապահովել է նրանց լիարժեք ներառվածությունը հասարակական կյանքին՝ նպաստելով համայնքում նրանց դերի արժևորմանը

Նախարարություն՝

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ա. Մանգասարյան

--------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ.

Կազմակերպություն՝

Նախագահ՝ Մ.Եփրեմյան

--------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ.